ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/07

ք. Երևան «16» օգոստոսի 2019 թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք:

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 14400000 (Տասնչորս միլիոն չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ
նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: 7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ք. Երևան Արշակունյաց 7	Ք. Երևան Չարենցի 1
h/h 90001300102O	h/h 2470100038500000
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01503291
Գլխավոր քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան	Տնօրեն----------Գ. Ազիզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/502	Ներկայացված է ստորև	դրամ	14400000	14400000	1	ք. Երևան	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից, մինչև 25.12.2019թ

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այնուհանդերձ ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Տեխնիկական բնութագիր
«Արաբկիր» սպասարկման գրասենյակի վերակառուցման և ընդլայնման նախագծի տեխնիկական առաջադրանք

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հնգամյա զարգացման ծրագրով ամրագրված՝ համակարգի կառուցվածքային բարեփոխումների շրջանակում նախատեսված է «Արաբկիր» սպասարկման գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) վերակառուցման և ընդլայնման իրականացում:

Գրասենյակի ծանրաբեռնված աշխատանքային գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով Գրասենյակի վերակառուցման և ընդլայնման նախագծային աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2019 թ. վերջին եռամսյակում, իսկ շինարարական աշխատանքները՝ մեկնարկել 2020 թ. երկրորդ եռամսյակում:

Առկա վիճակը

Գրասենյակը տեղակայված է ք. Երևան, Կոմիտասի պող., 35/2 հասցեում գտնվող, Կոմիտեի սեփականությունը հանդիսացող վարչական շենքի կիսանկուղային հարկում: Գրասենյակը ներկայումս զբաղեցնում է մոտ 415 քմ մակերես՝ աշխատակիցների հետևյալ կազմով.

- Գրասենյակի պետ,
- խորհրդատուներներ (5 աշխատակից)
- դիմում ընդունող և տրամադրողներ (16 աշխատակից)
- տեսաներածողներ (7 աշխատակից)
- մաքրուհիներ (1 աշխատակից)

Հաշվի առնելով Գրասենյակի աշխատանքային ռեժիմը՝ 6 աշխատանքային օր, ամսական ընդունվող դիմումների քանակը՝ շուրջ 10'000 դիմում, անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու սպասարկման գրասենյակի տարածքի ընդլայնում, որը կարող է կատարվել շենքի բակային տարածքի հաշվին: Ընդլայնումը հնարավորություն կտա ավելացնելու Գրասենյակի աշխատակիցների քանակը՝ ապահովելով ավելի շատ քաղաքացիների որակյալ սպասարկում:

Թեք ռելիեֆի վրա տեղակայված վարչական շենքի ընդհանուր ծավալը կարելի է պայմանականորեն բաժանել 2 մասի՝ բարձրահարկ ուղղահայաց և եռահարկ հորիզոնական: Գրասենյակի սպասարկման և վարչական մասերը գտնվում են կառույցի համապատասխանաբար 2 հատվածներում: Սպասարկման

գրասենյակը վարչական շենքի այլ գործառույթներ իրականացնող մյուս ստորաբաժանումներից անջատելու, ինչպես նաև գրասենյակի համալիր աշխատանքը կազմակերպելու նպատակով գրասենյակի սպասարկող և վարչական մասերի միջև կապը ապահովում է շենքի հյուսիսային ճակատի կողմից իրականացված երկհարկ կցակառույցը: Գրասենյակի սպասարկման սրահի մուտքը շենքի արևմտյան ճակատից է: Սպասարկման սրահն ունի 243.3 քմ ընդհանուր մակերես, որտեղ տեղակայված են խորհրդատուներն ու դիմում ընդունող և փաստաթղթերը տրամադրող աշխատակիցները: Սրահի հետնամասում առկա են հիմնականում աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցներ, որոնց մուտքային հատվածը սրահից քողարկված է միջնորմով՝ իրականացված գիպսաստվարաթղթից և մետաղական կոնստրուկցիայից: Սրահն ունի սյունահեծանային կոնստրուկտիվ համակարգ՝ երկայնական և լայնական ուղղություններով, սյուների քայլը 6 մ է, առաստաղի բարձրությունը՝ մոտ 2.95 մ: Գրասենյակի վարչական մասը՝ գրասենյակի պետի և տեսաներածողների սենյակները, տեղակայված են շենքի բարձրահարկ մասի ստորին հարկում: Կառույցի հյուսիսային ճակատի կողմից առկա կցակառույցի տարածքում տեղակայված է շենքը սպասարկող կաթսայատունը: Նույն ճակատին հարող բակային տարածքը ծառայում է որպես ավտոկայանատեղի ամբողջ շենքի աշխատակազմի մեքենաների համար:

Առաջադրանք

Գրասենյակի ընդլայնումը նպատակահարմար է իրականացնել շենքին հարող բակային տարածքի հաշվին՝ հաշվի առնելով կոմունիկացիոն հորերը, ռելիեֆի առանձնահատկություններն ու առկա կաթսայատան տեղադիրքը: Մոտ 1'500 քմ հողամասից շուրջ 250 քմ-ն նախատեսվում է տրամադրել սպասարկման գրասենյակին: Այսպիսով Գրասենյակի սպասարկման սրահը հնարավոր կլինի պայմանականորեն բաժանել 2 մասի՝ մուտքային հատվածը տրամադրելով խորհրդատուների խմբին, իսկ նոր իրականացվող կցակառույցը՝ դիմում ընդունող և փաստաթղթեր տրամադրող աշխատակիցներին: Այս 2 գործառնական տարբեր մասերի պայմանական տարանջատումը կարող է տեսանելի դառնալ սրահների առաստաղների բարձրությունների տարբերությամբ: Խորհրդատվական բլոկը, տեղակայված լինելով գոյություն ունեցող սրահում, կունենա մոտ 2.95 մ բարձրություն, իսկ հիմնական սպասարկման սրահը հնարավոր կլինի իրականացնել կրկնակի բարձրությամբ՝ ընդգրկելով նաև գոյություն ունեցող կառույցի առաջին հարկի պատուհանները: Նոր կցակառույցի ծածկը հնարավոր է իրականացնել «կանաչ տանիք» սկզբունքով:

Մուտքին անմիջապես մոտ նպատակահարմար է տեղադրել անվտանգության համակարգ: Նման տեղադրությունը հնարավորություն կտա ավելի արդյունավետ կազմակերպելու անվտանգության աշխատակիցների աշխատանքը՝ ապահովելով տեսանելիությունը դեպի սպասարկման սրահ և ընդհանուր տարածքի մուտք հանդիսացող ուղեփակոց:

Անհրաժեշտ է նախատեսել հերթագրման և վճարումների էլեկտրոնային համակարգեր՝ համապատասխան սարքավորումներով, ինչպես նաև հերթի կառավարման էկրաններ նպատակահարմար տեղերում:

Ընդլայնման արդյունքում հնարավոր կլինի կազմակերպել միջավայրն ըստ ֆունկցիոնալ գոտևորման՝ ավելացնելով գոյություն ունեցող սենքերի մակերեսները և փոխելով առկա սենյակների ծավալահատակագծային կառուցվածքը: Նոր վերահատակագծումը հնարավորություն կտա ավելացնելու աշխատակիցների քանակը հետևյալ կազմով.

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ, ՍԵՆՅԱԿԻ ԿԱՄ ՇԵՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՄԱԿԵՐԵՍ
Գրասենյակի պետ	1 աշխատակից	57 մ²
Խորհրդատուներ	10 աշխատակից	190 մ²
Դիմում ընդունող և տրամադրողներ	22 աշխատակից	233 մ²
Տեսաներածողներ	12 աշխատակից	80 մ²
Հանգստի սենյակ		20 մ²
Տեխնիկական սենյակ		7 մ²
Սանհանգույցներ		20 մ²
Անվտանգություն	2 աշխատակից	8.,5 մ²

Աղյուսակում ներկայացված սենյակների մակերեսները մոտավոր են:

Շենքին հարող բակային տարածքը շարունակելու է ծառայել որպես ավտոկայանատեղի աշխատակիցների համար: Գրասենյակի ընդլայնման հետևանքով այն կունենա մոտ 1'200 քմ մակերես: Պահպանելով

ավտոկայանատեղի նախագծման նորմերը՝ նշված հողատարածքի վրա անհրաժեշտ է նախատեսել առնվազն 35 ավտոմեքենայի կանգառ:

Շինարարական և հարդարման նյութեր

Գրասենյակի նախագիծը անհրաժեշտ է մշակել ՀՀ քաղաքաշինական օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն:

Գրասենյակի ընդլայնման նախագծով կարող են նախատեսվել կարկասային կրող կոնստրուկցիաներ՝ դեֆորմացիոն կարով գոյություն ունեցող շենքից անջատված: Ընդունելի են թափանցող կամ կիսաթափանց կոնստրուկտիվ համակարգերի կիրառումը սպասարկման սրահին առավելագույն բնական լուսավորությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև թափանցիկ կամ կիսաթափանցիկ պատող կոնստրուկցիաների կիրառումը:

Ներքին ծածկույթների համար տարբեր հարդարման նյութերի կիրառումը նպատակահարմար է բաշխել հետևյալ սկզբունքով. սպասարկման սրահում՝ կերամոգրանիտ, աշխատասենյակներում՝ բարձրակարգ լամինատե հատակ, սանհանգույցներում՝ կերամիկական սալիկներ կիրառել հատակի ծածկույթի տեսակին և երանգին համապատասխան շրիշակներ, պատերի հարդարման համար օգտագործել բարձրորակ, լվացվող լատեքսային ներկ: Ցանկալի է հնարավորության սահմաններում իրականացնել գիպսակարտոնե կախովի առաստաղներ՝ ներկառուցված ժամանակակից լուսատուներով:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների իրականացման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ դրանց կանխարգելման կամ մեղմացման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել հատուկ միջոցառումներ:

Էլեկտրամատակարարում

Էլեկտրական լուսավորման նախագիծը մշակվելու է ըստ գործող ճարտարապետաշինարարական կանոնների և նորմերի: Էլ. սնող մալուխի ներանցումը կկատարվի շենքի գլխավոր ուժային պահարանի միջոցով. գլխավոր ուժային պահարանից՝ լուսավորության վահանակներ, օդափոխության շարժիչներ: Նախագծում նախատեսվում է արտաքին և ներքին հողանցում, որին կմիանան էլ. սարքավորումների մետաղական մասերը: Ներքին ողջ էլեկտրական և այլ մալուխային համակարգերի լարանցումները կարող են իրականացվել չծածկված եղանակով: Լուսատուների ընտրության հարցում պետք է հնարավորինս կիրառել էներգախնայող լուսատուներ: Էներգախնայողությանը կարող է նպաստել նաև անջատիչների խմբավորումը: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շենքի էներգախնայողությանը՝ հատկապես կրճատելով ջեռուցման և օդորակման (օդափոխություն և հովացում) համար ընթացիկ ծախսերը: Այս նպատակով կիրառելի են արևային էներգիայով սնվող պանելները:

Նախագծման ընթացքում անհրաժեշտ է նախատեսել ներքին համակարգչային ցանց և համապատասխան կապի ու թույլ հոսանքների մալուխային համակարգ՝ միացված գլխավոր մալուխային համակարգին, ինչպես նաև սերվերին: Հիմնական սպասարկման սրահում սեղանների ազատ դասավորության դեպքում անհրաժեշտ է էլեկտրական սարքավորումների տեղադիրքը նախատեսել հատակի վրա համապատասխանաբար լարանցումը կատարելով հատակի միջով՝ գոֆրե խողովակներով կամ կեղծ հատակի կիրառմամբ:

Ջրամատակարարում և կոյուղի

Գրասենյակի խմելու և հակահրդեհային կարիքների համար ջուրը մատակարարվելու է գոյություն ունեցող ջրագծից: Արտաքին ջրագիծը և հակահրդեհային ջրամատակարարման ցանցը մոնտաժվելու է պոլիէթիլենային, իսկ ներքին տաք և սառը ջրամատակարարման ցանցերը՝ պոլիպրոպիլենային ֆոլգայի և ջերմամեկուսիչ պատյանով խողովակներով: Կոյուղաջրերը պետք է միանան կոյուղագծին, կոյուղու արտաքին ցանցը՝ պոլիէթիլենային, իսկ ներքինը՝ պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժումով:

Ջեռուցում և օդափոխություն

Գրասենյակի ջեռուցման համակարգն իրականացվելու է գործող շինարարական նորմերի և կանոնների պահանջներին համաձայն: Որպես ջերմային աղբյուր՝ նախատեսվելու են բնական գազով աշխատող կենտրոնացված կաթսաներ, իսկ որպես ջերմային սարք՝ ալյումինե սեկցիոն մարտկոցներ: Ջեռուցման համակարգը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային ֆոլգայի միջուկի խողովակներով: Գրասենյակում անհրաժեշտ է նախատեսել ներածող-արտածող մեխանիկական և բնական օդափոխություն: Օդափոխության համակարգերի բոլոր օդատարները մոնտաժվում են ցինկապատ եղանակով և կարող են լինել չծածկված: Աշխատանքային մի շարք սենյակներում, ինչպես նաև սպասարկման սրահի տարածքում

անհրաժեշտ է ապահովել նաև հովացման համակարգեր, որոնք կարող են աշխատել չկենտրոնացված սարքերի միջոցով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ք. Երևան Արշակունյաց 7	Ք. Երևան Չարենցի 1
h/h 900013001020	h/h 2470100038500000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01503291
Գլխավոր քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան	Տնօրեն----------Գ. Ազիզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____ __	_____
_____ __	_____
գտնվելու վայրը _____ __	գտնվելու վայրը _____
հհ _____ __	հհ_____
հվհհ _____ __	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն